ՃԿ.

Լուաք թէ շահ թահմազն զէջմիածին կողոպտեալ և ամայացուցեալ, զոչ ինչ թողեալ, և կաթուղիկոսն ի յարզրում փախեալ. և անտի գալ ասա ասեն։ (Հ. Միք. վրդ. առ Մխիթար, յամին 1747 Յունվ. 9. [Պոլիս])։

ՃԺ.

Տաճիկն ի վիտին և ի նիշն 80000, այսինքն ՁՌ հոգի ժողովեալ են, և ասեն ոմանք ի վերայ պանադին, ոմանք ի վերայ մեր յարձակիլ պատրաստին... Տաճիկք բերեալ են զմիջահասակ հայ կին մի երեվանցի ի Պէլրղատ, և հայք կամին ազատել զնա, բայց ոչ կարացին աւելի ժողովել, քան զ100 ղուշ.։ Իսկ գին նորա է 300 ղուշ. վասն որոյ ազաչեմ, զի երեվանցի պարոնայք տացեն զառատ ողորմութիւնս, և յղիցեն ասա վասն ազատութեան կնոջն այնորիկ։ (Հ. Թեոդորոս մեծ տիաշցի առ Մխիթար, յամին 1747. փետր. 11. ի չանցն Բեղրովարատինոյ)։

ՃԺԱ.

Լուաք թէ պետն պարսից[1] զհայոց ազգն ի ներքոյ այն տէրութեան եղելոց չարչարէ և տանջէ և կեղեքէ զապրանս նոցին, որպէս զՂազար կաթուղիկոս և զէջմիածին կողոպտեալ. և կաթուղիկոսն ի յարզրում փախեալ է։ (Հ. Միք. վ. առ Մխիթար, յամին 1747 ի մարտ 23. [Պոլիս])։

ՃԺԲ.

Ամսիս 21, երեք կարտինալք վախճանեցան. մինն Ալվավիվա, որ էր ըսպանիւ և Ղափօլու թագաւորաց էլճի. միուսն կարտինալ Փէթրան, երրորդն՝ քօրամպօնի. 15 ժամուց մէջ երէքն վախճանեցան. թէպէտ երկար ժամանակ էր որ հիւանդ էին։ (Պատկերահան Յովհաննէս առ Մխիթար, յամին 1747 մարտի 25. [Հռոմ])։

ՃԺԳ.

Վասն հայոց կաթուղիկոսին եկն լուր ասա, թէ Շահթամազն փախուցեալ է յէջմիածնայ, և նստուցեալ է ի տեղւոջ նորա զմի Ջահուկ վարդապետ. ուստի կաթուղիկոսն եկեալ այժմ ի քաղաքն Կարնի, և գրեալ է փաթրիկին[2] թէ ունիմ ընդ իս զբազում մասունս. բայց ոչ ունիմ զտեղի բնակելոյ. առաքեա՛ առ իս զոմանս վարդապետս՝ զի եկեալ օգնեսցեն ինձ։ Իսկ փաթրիկն յղեաց զերկուս վարդապետս, որոց մինն մերձ ուղղափառութեան է և կոչի ահագին. և միւսն աթանաս, որ զբազում վնասս եւ գաղատացուց։ (Հ. Թում. վ. [Սեբաստացի Թեոդորոսեան] առ Մխիթար, յամին 1747 մայիսի 1. [Պոլիս])։

---

1. Թահմազ Ղուլի խան։
2. Յակոբ Բ. Պատրիարքի Կ. Պոլսոյ։